





902

L.IV.5










# ԾԱՇԻԿ ՄԱՆԿԱՆՑ


ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ



ԱՐՏՈՎԱՆՑ

Ա. ԱՐԳՈՎԵԱՆ





ՆՈՐ ՀՐՁՈՒ — ԹԻԹԵՐՐՈՒԴ ՏԱՐԻ



ՏԵՂՄԱՆԻ ԵՎ ՀՐԱՄԱԿԻ ՆԵՐԻ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1889





ՅԱԿԱԳԻՆԻ ՇԱՀԻ ՄԱԼՎԱՐԵՒ 1 ԹՈՒՑ



Գ. Ե Լ. Գ. Ե Լ Զ Ե Լ Մ Բ.

ԿԱՅՍՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ



# Յ Ա Զ Ի Ա Շ Յ Ա Ց

Թիւ 1

1889

Հունվարի 1

# Վ Ա Ր Դ Ա Ն Ո Յ Ճ



ինգ տարեկան  
էր հովիւ  
Մեր սիրական  
Քոյք ազնիւ,  
Որ անուշանէր  
Վարդանայշ  
Ունէր ձեռներ  
Ցոյժ քնքոյշ :

Կը սիրէր յոյժ  
Նա երգէր,  
Եւ չունէր ժոյժ  
Երբ երգէր

Սիրանուագ  
Մի սոխակ՝  
Երկնադաշնակ  
Մ'եղանակ :

Առտու կանուխ  
Ժամկոշին  
Երբ «Թափն ու բուփ»  
Ականջին  
Հւը կը հասնէր  
Նա փութով  
Լեզուովն երգէր  
Խւը փութով :

Զեռքը կուրծքին  
«Զիայր մեր»  
Երբ սրտագին  
Ցեղյեղէր՝



Փութայր իսկոյն  
և պարտէզ,  
Ծաղիկներոյն  
և հանդէս։  
Նարդոս, քըքում  
Մանուշակ՝

Ամէն օր խում  
Սնուշակ  
Զեռքէն անոր  
Առնուին  
Ամպեր երբոր  
չը լսյին։

Ծաղկանց երի  
Նա նստած՝  
Սոխակների  
Ունկնդրած՝  
Եր զի յանալս  
Առաքէր  
Երգէր ուրախ  
Դէա ՚ի վեր։  
Սակայն ընդ վաղ  
Իւր գարուն՝  
Ի ծոց, աւան,  
Յաւերուն  
Թառամեցաւ  
Թողլով նոր  
Կոկիծ եւ ցաւ  
Իւր հէգ մօր։  
Գնաց հարկաւ  
Խքրու զկաքաւ  
Խայտալու,  
Որպէս սոխակ  
Երգելու  
Ալելու  
Եւ զինչ մեխակ  
Բուրելու։

Յ. թ. ԳԱՅԱԵԱՆ

Մեկ. 1886

## Դիմովակին ԿՈՇՎԱԿՈՐԸ

Տարունակութիւն նախորդ բիւէն  
— Դիւզին բնակիչներէն ոմանք կը  
կարծէին թէ, հայր կրօնէ չէր գիտեր  
թէ գինովութիւնը գարշելի մոլութիւն  
մ'է, և սակայն գիտէր, և դարձեալ կը  
խմէր։ Շատ անգամ կը տեսնուէր որ  
գինովութեան աղէտալի հետեանաց վը-  
րայ կը խօսէր, և սակայն կը խմէ՛ր...  
— Բայց ինչո՞ւ կը խմէս ուրեմն...  
կը լսէին իրեն։  
— Ե՛կ... վարժութիւն եմ ըրած...  
կը պատասխանէր կրօնէ։

Հազիւ քառորդ մ' անցած էր, և ահա  
երկոքին, կրօնէ և Ծէմիֆա ընկերը, մի  
քանի կանթեղներով լուսաւորուած գի-  
նետան մը դրան առջեւն հասան։ Դրան  
վրայ դրուած տախտակի մը վրայ կը  
կարդացուէր լամրարի մը լրցով Ոսկի  
Աստղ։

Ներսը տասնեհինգի չափ մարդեր  
նստած կը խօսակցէին խմելով, ամէն  
ճակատներ կարմրցած էին գինւոյն աղ-  
դեցութեամբ, ամէն աչք գրեթէ մարած  
էին, և կը չանային փայլիլ վերատին։  
Երբ կը խնդային, բերաններէն դուրս  
գինւոյ չոգի մը կ'ելնէր։ Գինետան աղ-  
մուկը երրեմն կ'աւելցնէին իրարու կե-  
նաց պարագուով բաժակաց շառաչխնք։

Հայր կրօնէ ընկերոջն հետ երբ ներս  
մտան, իրարու երես նայելով խնդացին.  
Կօշկակարը ըստաւ.

— Մեզմէ առաջ ասոնք ճակատնին  
կարմրցուցե՛ր են։

— Վայ.... հայր կրօնէ.... բա՛րեւ....  
ըստաւ ձայն մը։

— Հրամմէ՛ հոս .... տղայ. շիշ մը օղի  
բէ՛ր.... պուաց ուրիշ մը ....

— Շիշ մը գինի՛.... մանչ .... գոչեց  
երրորդ մը։

Եւ ամենքն ալ զանազան հրաւէրնե-  
րով կօշկակարն ու ընկերն իրենց քով  
կը կոչէին, զայն ուրախ գտնելով։

Կրօնէ Ծէմիֆայի հետ կարմիր քի-  
թով ու երեսով մարդու մը քով գնաց  
նստաւ ի մեծ ուրախութիւն նորա, Ա-  
սիկա գինետան երկապագուներէն մին  
էր։ Ամէն երեկոյ սովորութիւն ունէր,  
այս գարշելի մոլութիւնը ձեռք առնե-  
լու. երբ տուն կ'երթար, կինն ու զա-  
ւակը արդէն քնացած կ'ըլլային..... Այս  
մարդը ձերմակ մասկեր և կապոյտ աչ-  
քեր ունէր. գոյնը կարմիր էր գրեթէ  
և աւելի կարմրցած էր գինիէն։ Զինքը  
տեսնողին ծիծաղը շարժող ապօւշ մ'էր։

Այս մարդն էր որ շիշ մը գինի հրամայած էր . ապահով ըլլալով որ , իր վաղեմի ծեր կօշկակարը քովը պիտի գար :

Տղան գինին բերաւ :

Եւ ահա հայր կրօնէ , թէմիֆա և միւսըն սկսան կարմիր բաժակները պարպել..... : Երեքն ալ մաղթանքներ ընելով գինիին շատնալուն . կը պարպէին գաւաթները :

Հինգ վայրկեան անցած էր , և ահա թէմիֆա հրամայեց շիշ մը գինի եւս բերել : Առջի շիշը հատած էր :

— Ասոր ստակը ե՞ս պիտի տամ , ըստ :

Տղան գինին բերաւ , և գաւաթները լեցուելով պարզուեցան : Հայր կրօնէ կ'սկսէր կարմիրիլ : Եւ սակայն , խօսեցան չորս օր առաջ մեռնող գիւղին մէկ քահանային վրայ ..... սակայն թէմիֆա պօռաց :

— Մի՞թէ հոս քահանայի վրայ խօսելու կուգան ..... :

— Իրաւունք ունիս , ըստ հայր կրօնէ :

— Ճիշդ խօսեցար , աւելցուց միւսը , գաւաթ մը պարպէլով :

Շիշին գինին կը հատնէր . և գրեթէ ա՛լ հատած էր..... : Թէմիֆա որ գինովցած էր գրեթէ միւսներուն նման , նորէն հրամայեց շիշ մը գինի բերել : Գինին բերուեցաւ , և տղան , որ կը ճանչէր այս երեք անձերը , զարմացաւ տեսնելով որ այն գիշերն այնչափ ժամանակի մէջ , այսինքն մէկ քառորդի մէջ երեք մեծ շիշ գինի խմած էին :

Ա՛լ գինովցած էին . իրարու խօսքերը չէին կընար հասկնալ : Երեք գինովները , երեք ապուշներ , երեք անասուններ էին գրեթէ :

Գինետան միւս յաճախորդները կըսկսէին մեկնիլ այլ ևս , եթէ ոչ երեք ընկերաց չափ , այլ սակայն դարձեալ

բաւական գինով :

Ժամը երկուք կը հնչէր , և դեռ կը րօնէ , թէմիֆա և միւս գինովն գինետան մանչուն կը հրամայեն գինի բերել :

Երբ մարդ չափազանց կը գինովայ , ա՛լ անասուն մ'է նա . կը խնդայ երբոր փայտի հարուած մ'իջեցունես անոր : Կարծես անզգայ է . ա՛լ անկէց աւելի ծիծաղելի բան չկայ :

Սակայն այս անդամ կապսյա աչերով մարդը և թէմիֆա չխմեցին , և ծիծաղելով միայն կրօնէի պարպէլ տուին գաւաթները : Երեքն ալ արբեալ էին..... բայց այս անդամ կօշկակարը զանոնք գերազանցեց : Աթէ նոյն միջոցին մարդ մը ներս մտնէր , չէր ճանչնար գինքը . աչաց ճերմակները երեսին գոյն ունէին , այսինքն անսնց չափ կարմրյած էին :

Երբ ժամը երկուք ու կէս զարկաւ , թէմիֆա որոշեց մեկնիլ . հոն ձգելով երկու ընկերները : Խռպոտ ձայնով մը գինետան տղան կանչեց , վճարեց ստակը , և գայթի կ գայթ մեկնելու ժամանակը ըստ հայր կրօնէի թէ՝ կը մեկնէր ինքն . Եւ մեկնեցաւ : Հայր կրօնէ գրեթէ չիմացաւ ընկերոջն ըստն անիմանալի հայհոյութիւններ մրմռալով :

Միւս ընկերը , — գրեթէ նոյն վիճակին մէջ , — կը ջանար արթնցնել կօշկակարը , կը ջանար զայն տեղէն հանել այլ ի զուր , — թէպէտ ինքն ևս չէր կրնար ոտքի վրայ կենալ :

Գինետան հինգ մարդիկը մեկնեցան , և գինետունը լուռ մնաց ..... այս լուռթիւնը կ'ընդմիջէին ժամացուցին կանոնաւոր թիք-թաքը և կրօնէի անիմանալի մրմռանջներն որ երդ ըսուելէ հեռու էին :

Գինեպանը և մանչը պատրաստուեցան գոյնել խանութը . գինեպանը պօռաց . — է'..... բարեկամներ ..... խանութը

գոցուելու վրայ է . ելէ՛ք տեսնեմ ..... :

Կրօնէին ընկերը յարեց

— Խանութը կը գոցէ՞ք .... հը՛ .... եւ ոտքի ելաւ առանց ուղիղ կենալ կարենալու . զարկաւ Կրօնէին որ կը խորթար , և ըստ կերկեր ձայնով մը . — Բարեկա՛մ .... Հայր Կրօնէ .... ե՛լ երթանք :

Հայր Կրօնէ արթնցաւ և շուրջը նայեցաւ ..... :

— Ի՞նչ .... գացի՞ն ..... :

— Գացի՞ն .... այո՛ գացի՞ն . գինով ծերուկ . ե՛լ . — գոչեց գինեպանը :

Երբ երկու արբեալները , ձեռք ձեռքի բանած , երերակոծ գուրս ելան գինեպանէն , կծու հովլ մը միսած էր ..... :

Երկուքն ալ կ'երթային .... — ո՞ւր . — իրենք ալ չգիտէին ..... :

Զարմանալին այն է որ , հայր Կրօնէ գիսէր թէ արբեալ էր . և կըսէր ինքներեն թէ ինչո՞ւ գինոված էր այդշափ ..... այս մասածմանց սակայն գարձեալ կըյաջորդէր առլշութիւն մը , և ինքնքինքը կը մտոնար :

Կրօնէ քայլած առեն աչերը վեր առաւ և տեսաւ որ ընկերը քսկը չէր .... ներկուն աչքերը պատցուց չարս կողմը և չկրցաւ նշմարել զ'յ՛ .... — գացած ըլլալու է մոսածեց :

Եւ իրօք , մարդը առանց գիտնալու թէ ուր կերթար փողոց մը մտած էր : Ըսել է , Կրօնէ , այդ մթութեան , այդ սոսկալի լոռութեան մէջ առանձին մնացած էր :

Ինքնիրեն կ'երգէր և կը խօսէր , երբ յանկարծ , հեռաւոր բարակ ձայն մ'իմացաւ ..... կարեւորութիւն չտուաւ այս ձայնին , կերեւայ թէ , ..... և իսկոյն ինկաւ պառկեցաւ տեղ մը :

Այս ձայնը , չոգեկառքի մը սուլիչին ձայնն էր .... և ինքն ալ ինկած էր եր-

կաթուղւոյն վրա՛ն ..... :

Տակաւ առ տակաւ չոգեկառքին անիւներուն ահսելի որոտումն կը հասնէր իր ականջին ..... : Հասկցաւ թէ չոգեկա՛ռքն էր որ կուգար ..... և սակայն բնաւին չը կարծեց թէ չոգեկառքին ճամբուն վրայ կը գտնուէր ..... :

Ի՞նչ սարսափելի հետեւանք ունի գինովութիւնը ..... :

Շոգեկառքին որոտումն սաստկացաւ ..... վատարազդ արբեալը վեր ասաւ գլուխը ..... և տեսաւ զյոգ մը սոսկալի լուսեղին աչերով ահարկու և սարսափելի ուր զանգուած մը , որ դէպ առ ինքն կը մերձենար ..... :

Եւ սարսուցաւ , գլուխը վար ընկաւ նորէն ..... — Սարսափելի՝ և տարօրինակ բան ..... կերեւայ թէ որոշած էր վշրիւլ կառքերուն անիւներուն տակ ..... :

Եւ ահա ահսելի չոգեկառքը իւր ոյժով գվրդելով գետինը ահագին և սոսկալի հրէշի մը նման աչերը բացած , կայծակի արտգութեամբ անցաւ գլժբազդ մարդուն վրայէն ..... որ աղազակ մ'ործակեց ..... և ..... արթնցա՛ւ ..... : Երսպ' կը առնէր նա ..... :

Սրեւուն կիզիճ ճառագոյթները կըրպակին պատուհաններէն ներս կը թափանցէին ..... ցերեկ էր ..... : Տեսաւ որ խէծը զոր փանած էր փակցընելու համար կաշիի կտոր մը , չորցա՛ծ էր մատին վերայ ..... քահ քահ խնդաց ..... :

Եւ սակայն լուրջ կերպարտն մ'առաւ , աղօթեց Աստուծոյ , փառք տուաւ Անոր ..... :

Այս երազը դաս \*մը համարեց իրեն չխմելու համար այլ ևս գինի կամ օղի ..... : Այս երազը պատմեց իւր ծանօթներուն :

Եւ այնուհետեւ ով որ կը հրաւիրէր զինքն ի գինետուն , բացարձակապէս

կ'արձակէր հետեւեալ վճիռն :

— Ո՞չ ..... բնաւի՞ն ..... գինին այն սոսկալի երազս կը յիշեցնէ ինձ , և հետեւաբար ըրած ուխտս ..... :

ՏԻՐԱՆ Դ. 28ԱԲԻԱՆ  
Աշակերտ Պերպերիան  
վարժարանի

### ՄԱՆԿԱԿԱՆ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հրանտ և Վահէ երկու եղբայր են և միւնոյն անկողնոյն մէջ կը պառկին :

Մայրն . — Հրանտ , ինչո՞ւ միշտ անկողնոյն մէջտեղը կը պառկիս , ալզափկ եղբօրդ տեղ մը չե՞ս թողուր :

Հրանտ — Մայրի՛կ . դեռ ի՞նչ ընեմ . անկողնոյն երկու կողմերն իրեն ձգած եմ :

Տղայ մը իւր մօրն .

— Մայր , ինչո՞ւ փիղը իւր գլխուն վրայ երկայն պատիճ . մ'ունի :

— Կերակուրը րերանը տանելու համար , կը պատասխանէ մայրն՝ անուշադիր :

— Ուրեմն դու ինչո՞ւ չունիս , կը հարցնէ տղեկին :

Մանկան աչերն կը ցաւին :

Մայրը կը խնամէ զնաև երբ կը տեսնէ իւր զաւակին աչաց միսյն դոց միալն և անկից արտասուք հոսիլն .

— Ի՞նչու աչքդ կ'արտասուէ կը հարցընէ նմա :

— Մայր , որովհետեւ զեեկ չը տեսնէր , կը պատասխանէ պաշտելի արարածն :

Բարդ .

Մ. Դ. ՄՕԶԵՍՆ

Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Խ. Թ. Ի. Ի. Ն.

Առողջութիւնը կարևորագոյնն ու ամենայարգին է հարաստութեանց . բարյականի հիմնական տարրն և երջանկութեան էական պայմանն է . առանց նորա ո՞չ նիւթական և ո՞չ բարյական հանգստութիւն կարէ վայելել մարդ :

Առողջ մարդն սահմանականութեալ է լինելով՝ իւր զործոյն մէջ չթերահար . երբ գծուար արգելքներու հանդիպի առանց յուսահատելու արիտրար կը դիմագրէ և յաճախ իսկ կը յաղթէ նոցա . բախտին ձախորդութիւնք չեն կրնար խրաչեցնել և դասալիքը ընել զնա կենաց մարտին մէջ . քանզի՛ ի չնորհս իւր առողջութեան՝ կը յուսայ յաջողութիւն գանել մի օր . յոյս մը կը ասածէ ասլագայ և այդ յոյս այնքան աւելի հաստատ կը վինի որքան հաստատ է իւր առողջութիւն :

Մարմառվ առողջ մարդն մաքով ալ առողջ կը լինի . հետեւարար ֆիզիգական և հոգեկան հաճոյից անսպառ աղբիւրներ կը հոսին անսր համար . բժշկին խիստ պատուէրներն անմիմնալի կը թուին նմա , անձկալիք չհառաջեր այսինչ այն ինչ կերակուրին կամըմելըն համար . առողջութեան մասին հոգերէ զերծ՝ կը սիրէ ունկնդրել թոշնակին որ կը գեղգեղէ , համելի է նմա 'ի դէտ կալ ըընութեան գեղեցկութեանց , պարապիլ ի խնդիր ծշմարտութեանց . աշխարհն անգոսնելի վայր մի չէ նորա համար , այլ կընծայէ նմա անհամար հրապոյրներ :

Վատառուղջ մարդն՝ գրեթէ միշտ անկանոյ գերի գարձած՝ իւր գերն յաշխարհի չէ կարող ընտել ըստ արժանւոյն . նա՝ որչափ ալ յօժար լինի կատարել իւր արարքերն առ անձն , առ ընտանիս , առ ազգն , որչափ ազնիւ փափաքներ ալ

ունենայ , սակայն իւր անիծեալ ախտն թոյլ չտար նմա տեսնել կատարումն իւր պարտուց և իրացումն իւր փափաքաց . թէպէտե բախտին բերմամբ մի քանի հազար ոսկիներ կամայլ հարստութիւններ ալ ժառանգած լինի իւր հայրերէն , սակայն այդ բարերախտութիւնք բնաւ արժէք մը չեն ունենար յաշս իւրեան . բոլորովին զոհել կը փափաքի զայնոյառողջութիւն իւր անձին . բայց դժբախտաբար եթէ իւր ախտ անբուժելի է , յայնժամ ինքզինքն ամենէ աղքատն և ամենէ արգահատելի արարածն կը համարի աշխարհի վրայ . աշխարհ յայնժամ մի դժոխք կը թուի իրեն համար և ամէն վայրկեան գերեզման մը կ'երեւակայէ իւր աչաց առջև :

Հետեւաբար , եթէ կուզենք չկորուսանել գլխաւոր աղբիւրն հարստութեանց և հաճոյից , եթէ կուզենք մեր այլազան պարտականութիւններն ըստ կարելոյն անխափան կատարել պարտինք համարել զառողջութիւն իրեւնիւթական և բարոյական հարստութեանց առաջինն , և սլահամել զայն իրրու մի հազուագիւտ գանձ , հետեւելով այն պատուիրանաց զրոս առողջարանութիւնն կը տայ մեզ :

#### ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՅՈՎՃԱՆՆՔՆԵԱՆ

Աշակերտ Լ. Վարդարանի  
Կիրասինյ

#### ՇԱՔԱՐԷ ՔԻԹԸ

Հարուստ մը , սիրահար արուեստից , նշանաւոր արձանագործի մի չինել տրուած էր իւր կիսարձանն կարի սուզգնով :

Թաջորդ շաբթուն , սպասաւորն անըզգուշութեամբ կը կոտրէ կիսարձանին քիթը . Արձանը կը զրկուի արձանա-

գործին , խնդրելով որ կարելի եղածին չափ չուտ նորոգէ : Արձանագործն զարմացեալ , կը խոստանայ յանձնել գործն իւր տիրոջ նոյն օրը և կը պահէ իւր խոստումն :

Մի քանի օր վերջ , մեծատունն անախորժ տեսաբանի մը ենթակայ ելաւ : Ճանձերը կուգոյին խմբովին թառիլ արձանին քթին վրայ : Ինք ի զուր կը վանէր վայնս , միշտ կուգային :

Պէտք է լսել թէ մեծատունն առաւել հիացմամբ կը առանէր իւր դեռատի հնգամեսյ աղեկն , և նորա փոքրիկ քոյրն , գեռ իւր առնտուին բազկաց մէջ որք արձանին քովին չէին հեռանար :

Բայց ժամանակէ մը վերջ , տարօրինակ երեւոյթ մը երեան ելաւ : Արձանին քիթը կը պատիկնար : Մի քիչ յետոյ կիսարձանն առաջուան նման անքիթմաց :

Ազնուականն հետաքրքրութեամբ մօտէն կը գիտէ հասկնալու համար այս հետաքրքրական երեւոյթին պատճառն : Յիթ զաքարէ շինուած էր :

Թարգմ.

Մ. Գ. ՄՕԶԵՍՆ



ԱՄՄԵՐՋՈՒԹԻՒՆ Ի ՀԻՒՍԽՈՅԻՆ ԸՆԻՆԾ

#### ԵՐԿԻՐ ՓՐԱՆՍՈՒ ԺՈԶԵՖԻ

նի

Մ Ա Կ. Ն Ո Ր - Զ Է Մ Պ Լ Ա. Ի


ԳԼՈՒԽ Ա.

Մբկնում Եւրոպայի . — Թումոյի . — Ծով Նոր - Զեմպլայի . — Սառոյցներէ պաշտեալ .

1872 Յունիս 13ին , առաւօտեան ժամը 6ին , Թէկլիք շոգենաւը Գերմանիոյ



Հայեանի ուղղութեան դեպ ի ճիռսիսային խորօքիններ : (Էր. 43)



հիւսասային արեւմտեան կողմը գտնուող Պրէմէրհօֆըն նաւահանգստէն կը մեկնէր, երկու տարուան պաշար առած: իւր մեքենայն 100 ձիու զօրութիւն ունէր, կարելի եղածին չափ առագաստ բացած պիտի ընթանար, խնայողութեամի գործածելու համար այն ածուխի սաւշարն՝ որ իւր անհրաժեշտ զօրութիւնը կը նկատուէր սառույցներու ընդդիմութեան յաղթելու համար:

Ճանապարհորդաց խումբը կը բաղկանար Վէջրիկիս ծովակալէն և Բաեէռ գնդապետէն, Օպրօշ, Օրէլ ծովակալներէն և Քէրս զինուորական բժշկէն. Խոկ նաւաստեաց խումբը կը բաղկանար մեքենավարէ մը, ջեռուցալանէ մը, խոհարաբէ մը և նաւաստիներէ, ընդամենն թուով 20:

Բաց ի սոցանէ, կը գտնուէին նաև 8 չուներ, որոց երկուքը Լարոնիսյէն և վեցը Վիէննայէն բերուած էր: Սոքորալիսիրներու լժման համար պիտի գործածուէին վտանգալից արշաւանքին մէջ կարեսոր գէր մը կատարելու համար:

Փոթորկաց և հողմոց ազդեցութեան ներքեւ նաւան քսան օրէն հազիւ կրցաւ հասնիլ ի Թուօմսօի, Նորվեկիոյ հիւսային արեւմտեան կողմն, ուսոկից առաւ նաւապետ Օլօֆ Քառլսըն և ձինորափ նաւակ մը: Բաեէր և Վէջրէիս ընդունեցան Ռուսաց Կայսրէն արտօնագիր մը, որով կրնային ամեն կողմ այցելել ընդուննուով աջակցութիւն գրացի ժողովարքներէն: Մոյն իւրագի արատօնագիր իրենց համար խիստ մեծ կարեւորութիւն ունէր ճանապարհորդութեան մը սոսկալի վտանգներուն դէմ:

Թուօմսօի, համանուն կղզւոյն վրայ հաստատեալ փայտաշէն փոքր քաղաք մէ: Լերինք բոլորովին անմշակ են.

Քաղաքին չըջակայքը ո'չ ծառ և բոյս կայ. եթէ ոք փափաքի ծաղկեփունջ մը ունենալ, պիտի ստիպուի իւր սենեկին մէջ թաղարներու միջոցաւ մշակելընտրած ծաղիկներն :

Յուլիս 13ին, Թէկիերօն կը շարունակէր իւր ճանապարհէն՝ ընդ հրամանատարութեամի Օլօֆ Քառլսի:

Երբ նաւը ծովային վտանգներն անցուց, հնացները մորեցին, տուագաստք պարզուեցան և սկսաւ վերջին և կարձատեւ ուղեւորութիւնը՝ զոր կը մնար կատարելու: Մի քանի օրէն յետոյ թէկիրօն կանցնէր հիւսային նորվեկիոյ վերջին քաղաքին առջեւէն, Համեռ Փըսթի, որ կը բարձրանայ Պալէն կը զեկակին վրայ: Քաղաքն ունի 100ի մօտուն՝ փայտաշէն զանգակատունով մը, և պաշտանեալ երկու թնդանօթներով, որոց րերնին մէջ ծովային թըռչունք եկած իրենց բոյնը հաստատած էին աներկիւզ: Ասպա Հիւսային հըրուանգանն երեցած էր: Վերջին ակնարկ մը արձակեցին Մաճուէ կղզւոյն վրայ, որու ծայրը կը բարձրանայ քառանկիւն աշտարակի մը նման այն հըրչակաւոր հրուանդանն, որ Հիւսային Սառուցեալ Ավկիւնոսի եզերաց վրայ եւրոպից յառաջնորդաց կայարանն կը նայ նկատուիլ. անկէց շոգենաւն ուղղուեցաւ դէպ ի հիւսային խորութիւններ:

Յուլիս 23 ին, բարեխատունութեան փոփոխումն, մշուշն և անձրեւը կ'իմացընէին թէ մօտալուտ էր սառույցներու երեւումն: Ամսոյն 25ին, հիւս լայնութեան 74<sup>0</sup>, 45' աստիճանին վրայ առաջին անգամ վինելով յանդուգն ուղեւորք նշմարեցին սառույցի կտորներ: Իսկզբան այնպէս կարծեցին թէ՝ դոքամիայն ծովուն մակերեսին վրայ ծփա-

ցող սառնամանեաց կտորներ էին , բայց որքա՛ն սիալեցան՝ երբ զգացին որ սառուցապատ ընդարձակ դաշտի մը մէջ կը գտնուէին :

Հիւսիսային արևելեան կողմն , սառուցներն այնքան կարծր էին , որ ծավալն կը գագրէր նաւարկելի լինելէ և ջերմաչափը զգալապէս կ'իջնէր : Երեք օրէն յետոյ , յառաջանալու համար հարկէր ջրէոյն դիմել և մեքենայն բանեցնել : 29—30 լուսնալու դիշերն , յաջողեցան մոնել ջրոյ այն աւագանաց միոյն մէջ՝ զոր սառուցն ամեն կողմէ կը պաշարէ երբեմն , ծանօթ մեզ ուարս անուամր :

Ականատես կը լինէին հազար և մի տարօրինակ երեւոյթներու , որք կը պարզէին լիովին նոր աշխարհ մը : Շըրջակայ ամեն իրերն անգոյն , կամ լաւագոյնո է ըսել անմարմին կ'երևէին . աչքն չ'ը գիտեր ուր հանդչիլայդ մըշտատեւ շարժման մէջ մերձաւորագոյն հորիզոնաց , որոց տեսարանն ամէն վայրկեան կը փոխուէր , չնորհիւ ծովուն և արեգական ազդեցութեանց ի վերայ սառուցին :

Ո՛վ կրնայ նկարագրելայդ մելամազձոտ պատկերներն , սառուցներուն վըրայ ալեաց մոնչիւնը , սառնակոյտներու մերձակայ ազմուէն , որք յանկարծ կ'երևին և միւնոյն ակնթարթի մէջ կանհետանան :

Ո՛վ կրնար երեւակայել այն հրաշագեղ հեղեղներն , որք կը հոսէին սառնակոյտներէն , իրենց անկմանն յառաջ եկած փրփրալից կոհակներն և կատակերգական երկիւղն ծովային թռչնոց , որք այդ սառնապատ գագաթանց միոյն վրայ կեցած ժամանակնին , յանկարծ կը կորսնցնեն իրենց յեցման կէտն և կը թռչուին , օդին մէջ սառառնելով ,

երթաւ վերստին թառելու համար մի այլ բրդաձեւ սառուցի մը վրայ :

Տեսարանն տարօրինակ կը լինի . արեգական լուսին ներքեւ , այն ատեն ամեն ձեւք կը կորսնցնեն իրենց կանոնաւորւթիւնն . առարկայից ստուերն ատկաւ առ տուկաւ անորոշ կը լինի , և ողջոյն բնութիւնն կարծես ցնորք մը կը լինի , որ չես հաւատար հիւսիսային աշխարհին մէջ գտնուած լինելուգ վրայ :

Յուլիս 29ին , Թէլիքրօթ հանդիսեցաւ սառուցի նոր խոչընդոտի մը՝ որոյ յաղթեց , բայց կրկին պաշարուեցաւ . Երեքօր ամբողջ սառուցներէ պաշարուած մընալէ յետոյ , շոգւոյն զօրութեամբ կըրցաւ ճեղքել սառուցներն և մոնել 32քիլոմէթր լայնութեամբ ծովու մը մէջ :

Օգոստ . 8ին , հիւս . լայն . 72°, 22' սատիճանին վրայ սառուցն այնքան կարծրացաւ , որ նաւն անկարող յառաջանալու , սոխառուեցաւ մնալ՝ սպասելու համար օդին փոփոխութեան : Եղերքին մօտ նշմարեց անգղիական նաւ մը : Ամեն ոք փութաց իւր հայրենի երկիրն նամակներ ուղարկելու . բայց անդղիական նաւն իրեն յանձնուած պաշտօնէն խուսարեցաւ կնօշտարվի ծոցին մէջ յառաջանալով :

Յաջորդ օրն , նաւն սկսաւ շարունակել իւր ուղին և մինչեւ Օդոսասոս 12չորդրեցաւ գէպի ի հիւսիսակողմն յառաջանալէ : Իւր առջեւ կը գտնուէին 12-16 քիլոմէթր ընդարձակութեան մը վրայ նոր-Զէմլայի բարձրաբերձ լերինք :

Բանքրոաճիու կղզեաց մերձակայքն , նշմարեցին ճանապարհորդք նաւ մը՝ որ Թէ կլիքրօթի ուշադրութիւնը կը գրաւէր թնդանօթի հարուածներով և իր գրօշակը պարզելով : Բաեէու և Վէյրէխ ծովակալներն ուրախութեամբ ճանչցան Աւստրօ-Հունգարական գոյներն իցնուն

շոգենաւն էր, ոյր մէջ կը գտնուէր Վիլցէք կոմսն, մին գիտութեանց այն նշանաւոր բարեկամներէն, որք ամեն մասամբ նուիրած էին իրենց աջակցութիւնն Թև.կերօֆի: իւր ճանապարհորդութեան նպատակն էր հաստատել Նախ հրուանդանին վրայ, Նոր-Զէմպլայի հիւսիսային կողմն, ածխոյ և կերակրոյ պաշար մը՝ երկրախոյզ ուղեւորաց համար:

Իրենց հանդիսումէն վերջ, երկու նաւերը յառաջացան գէպ ի հիւսիսային կողմն. բայց լայնութեան 70°, 18' եւ երկայնութեան 61°, 17' աստիճանաց վըրայ. մշուշն կազմուեցաւ, սառոցք երեցան և նաւերն առիպուեցան կանգառնուլ:

Իրենց մերձուկայքն, հարաւակողմն, կը գանուէր Պարէնց կողեաց խումբն. իւր երեակ հրուանդաններով՝ որոց փոկի որսորդք «Երեք դալադք» նկարագրական անունն տուած են: Միւս կողմանէ հիւսիսակողմն իւր շլացուցիչ սպիտակութեամբն կը կանգնէր հսկայական սառնակայտ մը, որ Նոր-Զէմպլայի սառնամանիքներէն լինել կարծուեցու:

Թարգմ.

Մ. Գ. ՄՕԶԵՍՆ

[Հարունակելի]

### Ի ՊԱՏԻՒ ՓԲՈՑԻՆ

Յովուէփ Բ. կայսրն կը ճանապարհորդէր յիտալիա, երբ իւր կառքն ճանապարհին վրայ քարի մը հանդիպելով խորտակեցաւ: Մեծաւ դժուարութեամբ կրցաւ մի քիչ հեռակայ գիւղ մը հասնիլ: Անմիջապէս գնաց պայտագործի մը կրատկն և խնդրեց գործաւորէն որ կարելի եղածին չափ չուտ նորոգէ իւր կառքն:

— Յօժարութեամբ, պատասխանեց

պայտագործն. բայց որովհետեւ այսօր կիրակի է, բոլոր գործաւորներս եկեղեցի գնացած են, և փուքը փչով գործաւորը իւր տունը չէ:

— Աւա՛սիկ լաւ առիթ մը տաքնալու, պատասխանեց կայսրն, ինքզինքն անծանօթ պահելով:

Իսկոյն սկսաւ փքոցը շարժեցնել, մինչեւ պայտագործն երկաթն կը դարբնէր:

Երբ անիւը նորոգու եցաւ, պայտագործն իւր աշխատութեան փոխարէն վեց սկսւդ պահանջեց և կայսրն տուաւ նմա վեց տուքախի: Բայց պատուաւոր երկաթագործն զայնու ճանապարհորդին վերադարձուց, ըսկըսվ նմա:

— Պարոն, անտարակայս սխալած էք, փոխանակ վեց սկսւտի, տուիք ինձ վեց սկի, զոր գիւղին մէջ ոչ ոք կրնայ աւրել:

— Կրցածիդ չափ գործածէ՛, պատասխանեց նմա կայսրն մտնելով իւր կառքն, կայսր մը պէտք է որ սոււդ վըճարէ այն հաճոյքն, զոր վայելած է աղքատա երկաթագործի մը փուքն փշելով:

Մ. Գ. ՄՕԶԵՍՆ

### ՀԱՄԱՐԾ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

## Ե Ր Ո Ւ Ս Չ Ղ Է Մ Ի

ԵՒ

### ՄՐԱԱՋԱՆ ՏԵՂԵԱՑ

ԳԼՈՒԽ է.

Ս. Աստուածածնայ Տանարն

Արխողոմայ արձանն միտմայու քարէ է, և մինչեւ ծնօտը ժայռէն կտրուած է. չորս կողմը՝ գէպ ի երեսները չորս սիւներով զարդարուած է և ասոնց վը-

րան բոլորաձեւ տաշուած է ստոմանի ձեւով և ծայրը երթալով սրացած է : Ներսի կողմը այժմ լեցուած է խճով, զրս անցնող դարձող Հրէայք կը նետեն, չորս կողմի պատուհաններէն : Արձանին յատակն ալ միւնյին ժայռին մէջ փորուած գեղեցիկ զարդերով բաց այժմ հողովծած կուած ըլլալուն չ'երե իր :

Սայն արձանին արեւելակազմին և տնօր կից վիմածոր մեծ այր մը կ'երեի :

մէջ փորուած, ուր փոքր գաւիթ մը կա երկու ամբողջ և երկու կէս սիւներով, որոնք նոյն ժայռէն յօրինուած և մարդակով մը իրարու հետ միացուցած են՝ ամենը մէկ ժայռէ : Այս մահարձանին համար Թրիստոնեայք «Ս. Յակովբայ այրը», իսկ Որաբայիք «Տիվանը Խըրաւն» կ'ըսեն, բայց վրան եփրայեցին յիշտակարուն մը կայ, որուն մէջ գրուած է Եղերայ շիրիմն ըլլալը :



ՅՈՎԱՆԱԲԱԹՈՒ 201

ոլուն գուռլոցգետնին մէջ գրեթէ թալուած է և միայն վերին ծնօտը կ'երեկ գետնին երեսին հաւառար : Այս այրին համար թէև Յովսափաթու գերեզմանն կ'ըսուի, բայց մենք Ս. Գրքէն գիտենք թէ Յովսափաթէ երուսաղէմի մէջ թալուած է : Կ'երեկի թէ սոյն այրն ի յիշտակ իրեն փորուած պիտի լինի :

Ափիսողսոյ արձանէն անդին, դէպի հարաւ մահարձան մը կայ ժայռին :

Յիշեալ մահարձանին հարաւային կողմը և անօր կից է « Զաքարիա որդւոյ Բարաքեայի գերեզմանը », բոլորովին միակտուր ժայռէ քառակուսի կտրուած, և իւրաքանչիւր երեսները երկու կիսասիւներով զարդարուած է . որոց ծնօտները քուածեւ դէպի ի գուրս ցցուած են, և անկէ սկսելով դէպի ի վեր բրգաձեւ ծածք ունի առանց կորսնցնելու իւր քառակուսի ձեւն : Դուռը չ'երեկի,

բայց հաւանական է որ բոլորտիքը եղած Հրէից գերեզմաններուն մէջ, հողին տակ աներեւութացած ըլլայ:

Զաքարիա մարգարէի սոյն գերեզմանէն դարձեալ դէպ ի հարաւ 100 մէթր հեռու մի բլրակ կայ, որուն համար տեղացիք « Յուդայի տեղ » կ'անուանեն և կ'ըսեն, թէ Յուդայ Սկարիովացւոյ կախուած ծառին տեղն է:

Վերև յիշեալ կամուրջին վրայէն անցնելով, և Կեդրոնի հեղեղոտը ու Յով-

դութեամբ որ աջ կողմերնիս կ'ինայ, ճանապարհը չարունակելով 12-20 վայրկեանէն և Պապ-Լ-Տավուտ ։ ըստ մեզ և Փրկչադուռ ։ ըսուած դրան առջեւ կը հասնինք ։ Ներս՝ մտնելով յիշեալ դռնէն և միւս կամարաբերնէն գուրս ելած ժամանակնիս, դիմացը կ'երևի մեր Ս. Հրեշտակապետի վանուց՝ հարաւային փողոցադուռն և վտակը պարտէցն:

Ուղղակի արեւելեան ճանապարհն Հըրէից թաղերն կը տանի, մեք արեւմըտ-



ԶԱԳԱՐԻԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆ (Յովստրոս ձորին մ.թ.) .

սակաթու ձորն ձախ կողմերնիս ձգելով ելնենք վեր։ Ճանապարհն դրեթէ պարսպին քովէն կ'ընթանայ։ Երբ վեր ելնենք այս բարձրէն կ'երեին, արեւելեան կողմ, մեր վերը յիշած մահարձաններն, Սելովամայ աւերսկ գիւղն, Գայթակլութեան լեռն և զանազան հնութիւնք, հարաւային կողմէն և Աբա հորն (Յորայ հոր) և Զար խորհրդոյ լերան միմասն, և այլն, որոց վրայ վերջէն պիտի խօսինք։ Մենք միշտ պարսպի ուղ-

եան նեղ ճանապարհն բռնելով փողոց մը դառնալէ յետոյ, ջրուն երկու կողմերն ալ մեր Վանուց պարտէցներն են, քիչ մը առաջ Պատրիարքարանի կամարին տակովը մեր Ս. Յակովեանց վանուց մեծ դրան առջեւի ընդարձակ հըրասպարակը կ'ելնենք :

[Շարունակելի] ՏՐԴԱԾ ՎՐԴ ՊԱԼԵԱՆ

ՔԱԶԱՍԻՐՏ ՏՂԱՅՔ

## ՍԻՎԻՆ ՏՕՊԱՆՔՈՒԹԻՒՆ

Օրուան մէկ վայրկեանը կրցաւ անմահացունել Սիլվին Տօպանքուռին անունը : Այն ազնիւ գործը , որ այս վեհաջն տղին յաւիտենական միառք վատրկցուց . և նորա տարաժամ մահուան ալ պատճառ եղաւ , ազդաց միտքը ըլքրաւուլ նշանաւոր դիւցազանց և մեծամեծ դիպուածոց կարգը թէեւ չկրնար դասուիլ , բայց ձմեւուան երեխյները վատրանին քով պատճուելու պարզ ու սրտաւուչ պատմութիւն մը կրնայ րլըլալ . ուսց վրայ ծեր ծնողքներ իրենց բարյական իրասաները կրնան աւելցընել , յայտնելով մանկանց թէ որքան լաւ բան է իրմէ աւելի տկարներուն պաշարանութիւն ընելու համար մինչեւ անգամ իւր կեանքն վուանքի մէջ դնել :

Սիլվին Տօպանքուռ երկու եղբայր ունէր , որ իրմէ շատ փոքր էին , թէպէտ ինքն ալ մեծ տղայ մը չէր՝ տափ իւր հօր պարծանք եղած էր , ոչ թէ գերազանց խելացի լինելուն , այլ բարի ու համեստ աղջիկ մ'ըլլալուն համար : Տասներկու տարեկան էր , լու կառավարութիւն գիտցող և փորձառու տանտիկնոջ մը պէս՝ Պարոն Տօպանքուռին տունը կը կառավարիր : Խոհեմութեանն ու հեղութեանը հետ միառեղ չափազանց գեղեցկութիւն ալ ունէր : Եկող հիւրերուն քաղաքավարութեամբ ու զարմանալի քաղցրութեամբ պատիւ ու մեծարունք կ'ընէր , ամէն մարդ այս պզտիկ տանափինոջ վրայ կը զարմանար , կրնամ ըսել որ ինք տղու տեղ դրած էր ինքինք : Տանը կառավարութիւնը և

իւր եղբարցը վրայ ունեցած սաստիկ ու գորավալի խնամքներուն հոգը՝ իւր կրթութեան հարկաւոր եղած ուսմունքներն ալ ձեռքէ ձգել չին տար անոր : Ասով չէ թէ չափազանց գիտուն մը պիտի մինէր , այլ առաքինասէր վարուց օրինակ մը . և իւր սորզիլ ուզելն ալ մարդոց աչքին փասասէր երեւալու համար չէր , միայն այս էր ուզածն , որ իւր խելքն ու սիրտը կրթելով՝ աւելի օգտակար ըլլայ , և ուրիշներուն իւր վրայ ցցուցած սիրոյն աւելի արժանաւոր ըլլայ : Եւ այսպէս ալ աղէկ կը յառաջդիմէր , որ ամէն ծնողք իւրեանց զաւակացը օրինակ կը ցցունէին զանի :

Սիլվին ամէն օր կ'առնուր իւր եղբայրը Տօպանքուռի բերդին մօտերը գալուը զօսնելու կը տանէր : Մի օր երբ տղայք մինակ կանանչ արօտին վըրայ կը խառապային , յանկարծ այնպիսի սստակի մրրիկ մ'ելու , որ Սիլվին ու եղբարքը ժամանակ չունեցան մօտերը պատսպարան մը գտնելու , կատաղի հովը ծառերը իրենց արմատներէն կը քաշէր կը հանէր , լորձիթներուն տանիքները ջարդուրուրդ կ'ըլլային : Տօպանքուռին երկու փոքրիկները սարսափելով՝ քալելու կարողութիւննին չի մնաց , Սիլվին գրկեց զանոնք ու հեղեղի նման իջած անձրեւներուն տակը ջուր մտածի պէս թրջած ուզեց կարճ ձամրէ մը բերդը հասնիլ : Այն միջնցին միւս սովորական ձամրէն ալ զիրենք փնտուղներ կուգային , վասն զի տանը մէջ գտնուողները ասոնց գուրս մնալուն համար անհանգիստ ըլլալով՝ մարդ զրկած էին որ զանոնք գտնեն ու առնեն տանին : Սիլվին երբ ձամրայ ելած կ'երթար՝ առջին մէծ հեղեղ մ'ելնելով յուսոնհատութեան մէջ ինկաւ , և որովհետեւ մինչեւ որ անկէ չ'անցնէր՝ տուն չէր կարող եր-

թալ, երկու եղբարքը գրկած անցնիլն ալ անհնարին էր, քանիզի ջուրը զիրենք կը տանէր: Վերջապէս ալ ճարը հատնելով՝ անոնցմէ մին հոն վար դրաւ և միւսը գրկելով այն վտանգաւոր հեղեղէն անցնիլ ուղեց: Հովին ու ալեաց կատաղութիւնը շատ անգամ զինքը պիտի կործանէին, և մի քանի անգամ ալ ընկըմելու վտանգին ենթարկուեցաւ: Վերջապէս անվասա միւս գետակը հասաւ մինչեւ կէս մէջքը ջուրին մէջ: Տըղեկը տարակով տեղ մը նատեցնելով՝ պատուիրեց որ չըլլայ թէ այն աեղլայ, մինչեւ որ ինք վերադառնայ: Արոնինեաւ միւս եղբայրն ալ պիտի բերէր: Աւստի կրկին մտաւ այն ահագին հեղեղին մէջ: Երբեմն ժայռերուն կը զարնուէր, և երբեմն ալ հովին սաստկութեանը դէմ դնիւլու համեռ՝ ծասի մը կը փաթթուէր: Վերջապէս հեղեղին միւս կողմն անցաւ, տղեկը հանգարանցուց, որ մինակ մնացած ըլլալով՝ վախոն կրուլոր: Սիրվին մեծ աշխատութեամբ և քաջութեամբ իւր եղբայրական պարտականութիւնը կատարելով այն փոքրիկները ողջ առողջ բերդը տարաւ, որոց վրայ մօր մը պէս խնամք ու սէր կը ցուցնէր:

Իւր գալը խմացուեցաւ, ու դիմուորելով՝ վազեցին, հայրը զինքը գրկեց տարաւ անկողնի մը մէջ պատկեցուց: Սաստիկ գող մը եկաւ վրան, իսկ քիչ ժամանակ յետոյ տենդէ մը բռնուեցաւ ու խելքը ցնորեցաւ:

Սիրվին միշտ աս խօսքերը կը զրացէր խելակորոյս վիճակին մէջ: «Մի՛ լար, հայրիկ, մի՛ լար, եղբայրներս աստեն, անոնք պատուելէն յետոյ՝ ես աղէկ եմ: »

Սոյն սրտածմլիկ խօսքերը մինչև մեռնելու վայրկենին մէջ ալ կը զրուցէր: Այս աղետալի դիպուածը պատահեցաւ

Օվեռնայի Փիէռֆօր գղեկին մէջ 1735ին: Սիրվին ժօլիսթ Տօսկանքու ա տասնունինդ տարու էր մեռած ժամանակ:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՄԱՐՏԻՐՈՒՅՑ

ՄԻՔԱՅԵԼ, Էֆ. ՍԵՃԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

ՏՈՒԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հասարակաց կրթութեան պաշտօնեայ Մեծ. Միքայէլ Էֆ. Աշճեանի ի պետս Ազգային վարժարարունաց պատրաստած և Աւուննական Խորհուրդէն վաւերացեալ Օսմանեան Պատմութեան գոսագիրքն որ ըստ ամենայնի յանձնաբարելի գործ մէ՛, կը ծախուի ամէն հայ գրավաճառաց քով, ի գին 5 գահեկան:

## ՄԻԹԶՅՈՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՀԵՆ Ա Խ Ս Ի

ԱՇԽԱՏԱՄԱՐՏԻՐՈՒՅՑ

ՍԵՀԱԿ ՔԻՀՈՆՅՈՅ ՍԵՀԱԿԵՅԸՆ

ՏՈՒԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ


Արժանապատիւ Տէր Սահակ քահանցի սոյն կարեւոր գործ, որ Վէհ. Տ. Տ. Մակար Ս. Կաթուղիսէն վաւերացեալ է, այս անգամ Պօլսոց աշխարհիկ բառբասի վերածուելով՝ և զանազան գեղեցիկ պատկերներսակ զարդարուած է:

Գինն է 4 գահեկան

Սոյն երկու նոր աշխատասիրութեանց կեդրանատեղին է Հանդիսիս տպարանն, Կ. Պօլս էսկի Զապթիլյէ ճատաէսի, թիւ 61:



## ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ :



## ՀԱՆԵԼՈՒԿ 2

Առ մէկ կըրակ՝ բայց թեթև ըլլոյ,  
Անոր պոչ իսպէ՛, վեր թըրացնո՞ւր երթայ,  
Պոչէն լաւ բըռնէ՛ որ չի փախցնես,  
Տա՛ր քառակուսի՝ մէջքին ու կապես,  
Ետք տու եռամկիւն մ' մօրուքէն բըռնէ՛,  
Աղէկ մը քաշէ որ թեկն երեխայ,  
Ետք տա՛ր ոլորտկին պոչին քով կապէ՛,  
Ճշմարիս կըսեմ, երեքն՝ լոյ կըլլոյ:

## ՀԱՆԵԼՈՒԿ 3

Երկու եղբայր ենք  
Անման երարու .  
Ընդ միշտ կատարենք  
Եարժում երկու .  
Ի բանափ մութ և անտես  
Գործէ մոյքն մեր  
Զարդու՞ոչ նշմարես:  
Ո՛չ սկիզբ, ո՛չ վախճան  
Ունի մեր ճանաբան .  
Յայնժամ դադրինք մեք ապրելէ  
Երբ մոյքն մեր հանգիստ ննջէ:

## ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆ 8


Իլ հրատարակուի տետր առ տետր 16 երեսէ  
բողկացեալ 15 օրը միանդամ: Տարեկան գինն է  
կանինիկ 30 արծաթ մէջիս Պօլսոյ համար: — Դա-  
ւառաց համար 40 դահեկան: 4 բուշի Ռուսաս-  
տանի համար: — Մէն մի տետրակին գինն է  
50 փարայ:

Խաժանորդագրութեան տեղերն են՝ կ. Պօլիս  
ինկի Զապթիկ ճատտէսի, թիւ 61. Հանդինիս  
խմբագրաստունը . — Կամսութի գլուխ՝ ջրափանա-  
Պօլոս և Ցակոր աղայից խանութները;  
Ա՛ղիսնուպօլիս . — Արամ էֆ. Սըրաճեան.  
Գահիրէ . — Յառաջդիմասէր ընկերութիւն .  
Երդնկա . — Մեծ. Միհրան էֆ. Աստուրեան.  
Լուկաթ . — Միհրան էֆ. Գիւրեմեան.  
Զմիւռնիա . — Ռւսումանիրաց Ընկերութիւն .  
Խիթիիզ . — Մեծ. Խոմք. Ազրիւր Հոննիսի .  
Մանիս . — Մկրտիչ էֆ. Գերձակեան.  
Մարտուն . — Յ. Թ. էֆ. Գայաեան.  
Նիկոմիդիս . — Ցակոր էֆ. Տէր Ազարեան.  
Ուսուոթոյ . — Ուուբէն էֆ. Գոլանճեան.  
Սաման . — Միհրան էֆ. Քիւրեճեան.  
Ակրաստիս . — Նշան էֆ. Թահմազեան.  
Ակմիգերօօլ . — Արժ. Օգսնատիսքնյ. Կոպակեն.  
Տրապիզոն . — Նշան էֆ. Գալայճեան.  
Օրտու . — Մեծ. Ցովչ. էֆ. Արսլանեան .

## ԾԱՂԻԿ

### ՄԱՆԿԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑԻ



արեգիլսէն ըսկըսելով թէ եւ  
Շաղիկ Մանկանցն հրա-  
սարակել ձեռնարկեցին ,  
բայց չորրորդ թիւն յետոյ  
զանազան պատճառներէ սիլպեալ հար-  
կադրեցանք առժամանակեայ կերպին  
դադրեցնել . իսկ այժմ վերսին կը ձեռ-  
նարկենք նորս շարունակութեանն մեր  
Բուրաստան Մանկանցի դիրքով :

1888 տարւոյ շշանին մէջ մեր ազնիւ  
Բաժանուրդաց պալաս մնացած հինգ թիւ-  
ի փոխարէն թէ եւ չորս թիւ Շաղիկ  
տուինք , բայց նկատելով որ հանդիսին  
կրկին մեծութիւնն ունի եւ անկարելի է  
ամբողջ հաւաքածոյն կազմել տալ , որո-

ւեցինք ներկայ նոյեմբեր ամսէն սկսե-  
լով հրատարակել Շաղիկն , եւ այն պա-  
կաս մնացած հինգ թիւրն ալ նիշդ սոյն  
դիրքին վերածելով՝ վերսին տպագրել եւ  
մինչեւ զալ տարւոյ վերջը հասն եւ ինը  
թիւր հրատարակելով շարունակութիւնն  
ամբողջացնել : Ուստի կը խնդրենք մեր  
Ազնիւ Բաժանուրդներէն՝ որ առայժմ կազ-  
մել չ'ան՝ մինչեւ որ զանոնք կրկին ըր-  
պագրենք :

Արդ ներկայ տարւոյ Շաղիկի Բաժանուրդ  
պիտի սահման 29 թիւր , բայցի ունենա-  
լիք գեղեցիկ յաւելուածներէն եւ զանա-  
զան տեսակ նույներէն . զոր պիտի նը-  
լիւենք մէն մի հանելուկ լուծուներու :

Այն ազնիւ յօդուածագիրներ՝ որք Շա-  
ղիկ Մանկանցի մէջ հրատարակուելու  
խնդրանօք զանազան բարգմանութիւնն  
եւ ուսանալուներ կը յդեն , եւ երբ մի  
ժամի թիւր հրատարակուելի յետոյ տպուած  
չեն տեսներ իւրեանց գրութիւնն , սիխո-  
լական նամակներով եւ երբեմն ալ չա-  
փազանց պահանջումներով կը խնդրեն  
եւ կամ կը հրամայեն թէ՝ ի՞նչ պատճա-

ուաւ չ'ենի հրատարակած եւ կամ թէ ինչ-  
չո՞ւ պատսախան մը չ'ենի գրած :

Ներում կը խնդրենի այդպիսի աւ-  
խառնիցներէ մեր ընթացից համար , որ  
իւր իրաւացի պատճառներն ունի . զոր  
կարելի չէ աս մի առ մի բացարել ,  
միայն թէ կը խնդրենի որ հետեւալ դի-  
տողութիւններն ուժի ոււով ընթեռնուն եւ-  
րաս այն վարութիւն այսուհետեւ :

Առաջին Հանդիսիս Բաժանորդք մի-  
այն իրաւունք ունի յօդուած, եւայլն  
յիելու եւ միայն զանոնք կը հրատակ-  
ուին բնութագութ:

Երկրորդ՝ չհրատարակուած գրութիւնի  
էս չեն սռուիր :

ԵՐՐԵՎ, պէս է որ գրութիւնն մատուց  
գրուած լինին եւ շարունակութիւն չ'ու-  
նենան, հակառակ պարագային չ'են հը-  
րատարակուիր :

Չորրորդ՝ պարտաւորեալ չեն մեն մի  
յօդուածագրի զատ զատ համակերով ծա-  
նուցանել իւրեանց յօդուածոց չհրասա-  
րակուելուն պատճառը. բանզի երէ իւր-  
եանց գրութիւնք հանդիսիս ուղղութեան  
յարմատ լինին, ուշ կամ կանուխ կը եր-  
րատարակուի :

Մեր նեռաւոր եւ մերձակայ բարեկա-  
մաց, որք գրաւոր եւ բերանացի ցաւակ-  
ենութիւն յայտնած էին, կը ցաւիմ որ  
չ'կարողացամ մի առ մի պատասխանել,  
ուսի ներկայիւս ներողութիւն կը խընդ-  
րեմ սոյն զանցառութեան համար, եւ  
վստահ եմ թէ այն հոգածութիւնն ու  
շանեն, զոր ունեին մեր հանդիսին վրայ,  
պիտի շարունակեն այսուհետեւ եւ չպիտի  
խնայեն իւրեանց աջակցութիւնն այն-  
պիսի թերթի մը, որու նպակակն է իւր  
կարողութեան ներածին չափ օգտակար  
հանդիսանալ Հայ ժանկունիք :

Ծաղիկ Մանկանցի հրատարակիչն .  
ինչպէս առաջին օրեն իւր պարտակա -

Յուրինը կատարած է, նոյնը մինչեւ վեր-  
ջը շարունակելու հաստա ոռուումով,   
այսօրութիւն իւր սարեկան գնոյն վրայ  
զգալի գեղզ մը կ'ընէ, նկատելով թէ աս  
փոքրիկ ուսանողներ չ'են կարող բաժա-  
նուդ լինիլ, ուստի ներկայ սարւոյ եղա-  
ցին սկսկալ Պոլսոյ բաժանորդաց համար

Տարեկան	30	դահեկան
Վեցամսեայ	15	»
Եռամսեայ	8	»
Մէկ քերպ	50	փարսպ

Գաւառաց համար

Տարեկան	40	դահիկան
Վեցամսայ	20	»
Եռամսայ	10	»
Թուսատաճի համար	4	ընթրի

Թղթաշարութեան ծախսի մեր վ

Վասան ենք քէ՛ մեր կողմանէ՛ եղած  
ոյն զգալի եւ կրկնակի զոհողութիւն-  
երն ի նկատի առնելով՝ մեր ազգի հա-  
յանորդք եւ Մեծ. Գործակալ կը ջս-  
ան հետզինետէ սուլարացնել հանդիսիս  
առանցորդաց ցանկն, որով մեժ եւս բա-  
ղաբերուելով՝ առելի գեղեցիկ եւ առելի  
իրավատելի բնելու կ'աշխատին :

Աւելորդ չեմ համարիր լիւեցնել մեր  
այս բաժանորդաց, որք մի բանի տարի-  
եթեկ ի վեր բաժնեզգին չեն վնարած, բա-  
հեմամփին այլ եւս հատուզանել:

Բաժանորդ գրուիլ զամկացող պէտք ե  
դիմեն Կ.Պոլիս, Էսկի Զապրիէ հաս-  
տէսի թիւ 61, ՆԵԱՆ Կ. ՊէտՊէտրէսէնի  
սպազրաւունը. խկ զաւաներէն եւ օ-  
ստ երեխրներէն հետեւայ հասցէի.

ر. علیه‌ده اسکی ضبطیه جاده‌ستده نوخر و ۶۹ نشان ... بربریان

NICHAN BERBERIAN

## Constantinople.

Eski Zabtié djaddessi, No. 61